Թեսթ 13
Ակսել Բակունց
Մթնաձոր

Մթնաձոր տանող միակ արահետն առաջին ձյունի հետ փակվում է. մինչև գարուն ոչ մի մարդ ոտք չի դնում անտառներում: Սակայն Մթնաձորում այժմ էլ թավուտ անտառներ կան, ուր ոչ ոք չի եղել: Ծառերն ընկնում են, փտում, ընկած ծառերի տեղ նորն է ծլում, արջերը պար են խաղում, սուլում են չոբանի պես, ոռնում են գայլերը, դունչը լուսնյակին մեկնած, վարազները ժանիքով վարում են սև հողը, աշունքվա փթած կաղիններ ժողովում:
Մի ուրույն աշխարհ է Մթնաձորը, քիչ է ասել կուսական ու վայրի: Թվում է, թե այդ մոռացված մի անկյուն է այն օրերից, երբ դեռ մարդը չկար, և բրածո դինոզավրը նույնքան ազատ էր զգում իրեն, ինչպես արջը մեր օրերում: Գուցե այդպես է եղել աշխարհն այն ժամանակ, երբ քարածուխի հսկա շերտերն են գոյացել և շերտերի վրա պահել վաղուց անհետացած բույսերի ու սողունների հետքեր:
Հիմա էլ Մթնաձորում մուգ-կանաչ մաշկով խլեզներ կան՝ մարդու երես չտեսած, մարդուց **երկյուղ** չունեցող: Պառկում են քարերի վրա, արևի տակ. ժամերով կարող եք նայել, թե ինչպես է զարկում փորի մաշկը, թույլ երակի պես, կարող եք բռնել նրանց: Խլեզները Մթնաձորում մարդուց չեն փաղչում:
Բարձր են Մթնաձորի սարերը. դրանից է, որ ամռան **երկար** օրերին էլ արևը մի քանի ժամ է լույս տալիս Մթնաձորի անտառներին: Եվ երբ հեռավոր հարթավայրերում արևը նոր է թեքվում դեպի արևմուտք, Մթնաձորում ստվերները թանձրանում են, սաղարթի տակ անթափանց խավար է լինում, արջերը **որսի** են դուրս գալիս, վարազներն իջնում են ջուր խմելու, իր որջի առաջ զիլ ոռնում է գայլը, ոռնոցը հազարբերան արձագանքով զրնգում է Մթնաձորում:
Գիշեր է դառնում, և գիշերվա հետ որսի են ելնում Մթնաձորի բնիկները: Արջը տանձ է ուտում, իրար թաթով են տալիս, թավալգլոր են լինում չոր տերևների վրա, դարան մտնում, հենց որ զգում են վայրի խոզերի մոտենալը: Արջը գիտե վարազի ժանիքի թափը, նախահարձակ չի լինում: Եթե տկար մի խոզ ետ մնա մյուսներից, արջը թաթի մի **հարվածով** ճեղքում է փափուկ վիզը, մի երկու պատառ լափում, լեշը ծածկում չոր ցախով ու տերևներով, քար դնում վրան,

փնթփնթալով հեռանում, մինչև լեշը հոտի:
Եթե հանկարծ վարազները լսեն ետ մնացած խոզի ճիչը… Սրածայր թրերի պես շողշողում են ժանիքները, անշնորհք շարժումներով արջին մնում է բարձրանալ կաղնու վրա: Կատաղի ձիերի պես վարազները վրնջում են, ժանիքներով ակոսում կաղնու տակ, զարկում ծառի բնին: Մթնաձորի ծերունի անտառապահը մի գարունքի տեսել է վարազի կմախքը՝ ժանիքը մինչև արմատը խրված ծառի բնում, ծառի ճյուղի արանքում արջի սատկած քոթոթին:

1. Տեքստի չորս բառերում տառի փոխարեն վանդակ է դրված, դո՛ւրս գրիր այդ բառերը՝ լրացնելով բաց թողած տառերը:

Գրել եմ և ներկել դեղին գույնով

2. Տեքստում ընդգծված նախադասության մեջ **պար են խաղում**, բառակապակցությունը արտահայտի՛ր մեկ բառով:

պարախաղ

3. Տեքստից դուրս գրի՛ր տրված բառերի հականիշները.
   ա/լույս - մութ
   բ/թաց - մուք
   գ/ջահել - ծեր
   դ/կենդանի - մարդ

4. Կազմի՛ր երկու նախադասություն՝ **անտառ** բառը օգտագործելով ուղիղ և փոխաբերական իմաստներով:

Իմ սենյակը անտառի է նման:

Անտառը շատ գեղեցիկ է:

5. Ո՞րն է **ագռավի ձայն** դարձվածքի ճիշտ իմաստը.
   ա/գեղեցիկ ձայն
   բ/բարձր ձայն
   գ/ուժեղ, խլացնող ձայն
   դ/կոշտ, կոպիտ ձայն

6. Ի՞նչ էին անում ընդգծված նախադասության մեջ.
   ա/գայլերը - ոռնում
   բ/վարազները – ժանիքով վարում էին սև հողը
   գ/ծառերը - փթում
   դ/արջերը - պարում

7. Տեքստում ընդգծված բառերից ստացի՛ր բայեր:

Երկյուխ – վախենալ

Երկար – երկարել

Որսի – որսել

Հարվածով – հարվածել

8. Տեքսում ընդգծված նախադասություններից դուրս գրիր երկու ստորոգյալ:

: Ծառերն ընկնում են, փտում, ընկած ծառերի տեղ նորն է ծլում, արջերը պար են խաղում, սուլում են չոբանի պես, ոռնում են գայլերը, դունչը լուսնյակին մեկնած, վարազները ժանիքով վարում են սև հողը, աշունքվա փթած կաղիններ ժողովում:

9. Այն ի՞նչն է, այն ի՞նչը.
   Պոզեր ունի այծ չէ,
   Թևեր ունի, թռչուն չէ:

թիթեռ

Տեքստը բաժանիր երկու մասի և վերնագրի՛ր:
Մթնաձորի բնությունը

Արջի արկածները

10.

11. Ինչպիսի՞ աշխարհ էր Մթնաձորը։
    ա/մուգ-կանաչ
    բ/արահետներով ու բացատներով հարուստ
    գ/կուսական ու վայրի
    դ/քարածուխի հսկա շերտերով հարուստ

12. Ինչո՞ւ էր արջը վախենում վարազից։

Արջը գիտե վարազի ժանիքի թափը

13. Նկարագրի՛ր վարազներին։
    շողշողուն ժանիքներով,ուժեղ,կատաղի ձիերի պես
14. Պատմվածքում ի՞նչը քեզ դուր չեկավ։
    Որ արջերը վախենում են վարազից։